№ 82 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 18 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 18 № 82

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի՝ տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., ամսական 1 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քիւրդ և Քիւրդստան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վլադիկավկազի համալսարանը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պալը և նոր կաթոլիկները. Կարագէօզեան կռիվը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Փաստեր և մտքեր.

ՔԻՒՐԴ ԵՒ ՔԻՒՐԴՍՏԱՆ

—

Պարսկաստանի սահմանագծի վրա, Սալմաստի մէջ, և Դիարբէքիրի շրջանում՝ վերջին շաբաթներս տեղի ունեցած դէպքերը՝ նորից սփոփում են ուշք դարձնել այն վիթխարի աւազակային խմբի վրա, որ քրդական ցեղ անունն է կրում։ Կատարեալ թիւրիմացութիւն պէտք է համարել, որ այդ աւազակային տարրը ընդունվում է իբրև մի առանձին ցեղ, իբրև մի առանձին ազգ, և նոյն իսկ որքան պատիւ են անում նրան, որ նրա անունով են կոչում Փոքր-Ասիայի մի ահագին տարածութիւնը՝ Թիւրքաց Հայաստանը փոխարինելով Քիւրդստան բառով...

Կրկնում ենք, դա մի մեծ թիւրիմացութիւն է։ Եթէ ընդունենք, որ կայ աշխարհագրութեան մէջ Քիւրդստան, եթէ ընդունենք, որ կայ մի առանձին ազգ, որին տրվում է քիւրդական ցեղ անունը, այն ժամանակ պէտք է ընդունենք, որ քաղաքական աշխարհագրութեան և ազգերի պատմութեան մէջ տեղ գրաւելու և անուն ժառանգելու համար՝ հարկաւոր չեն ոչ պատմութիւն, ոչ կուլտուրական ընդունակութիւններ, ոչ լեզու, ոչ որ և է ստեղծագործող, քաղաքակրթական ոյժ, այլ միայն ամեն ինչ քանդելու, ոչնչացնելու, արդարութեան և մարդասիրութեան դաղափարը ոտի տակ տալու, բիրտ, վայրենի ֆիզիկական ոյժ...

Եւ ահա այդ վայրենի, բիրտ, լոկ ֆիզիկական ոյժն է, որ ներկայումս ահագին դեր է կատարում խաղաղ ազգաբնակութեամբ բնակեցրած նահանգների մէջ, սկըսած Սալմասից մինչև Դիարբէքիրի շրջանը, սարսափ, արիւն և աւերմունք տարածելով պարսից սահմանագլխի ամբողջ տարածութեան վրա։ Նա քարուքանդ է անում ամբողջ գիւղեր, այրում, ոչնչացնում է աշխատաւոր ազգաբնակութեան արդիւնաբերածը, նա իրաւունք է համարում սեփականացնել այն բոլոր կանանց, որոնք լիութիւն կարող են տալ վայրենի ինստինկտներով բռնկված քիւրդին, նա վերջապէս համարձակվում է ձեռք բարձրացնել հարևան ազգի կրօնական ներկայացուցիչների վրա՝ սպանելով քրիստոնեայ եպիսկոպոսներին և քահանաներին։ Մի խօսքով նա չէ ճանաչում ոչ չափ, ոչ սահման, չէ ճանաչում որ և է պատասխանատուութիւն. նրա առաջ չը կայ ոչ օրէնքի սահման, ոչ էլ մի պետութիւն միւսից բաժանող սահմանագիծ։ Նրա առաջ բաց է. նա գնում է, ուր ուզում է, անում է, ինչ կամենում է...

Եւ ահա այդպիսի մի հակակուլտուրական, ամեն մի քաղաքակրթական ստեղծագործութիւն ոչնչացնող տարր, ինչպիսին է քիւրդ տարրը, բաղդ ունի քաղաքական աշխարհագրութեան մէջ տեղ բռնելու, բաղդ ունի իր անունով կոչել տալ մի ամբողջ երկիր, որը գուցէ միայն այն պատճառով իրաւունք ունի Քիւրդստան կոչվելու, որ այնտեղ տիրում է միայն մի ոյժ,—քրդի ոյժը, միայն մի կամք,—քրդի բռնաւոր կամքը...

Ոչ, դա թիւրիմացութիւն չէ միայն, այլ շատ աւելի. դա կատարեալ դժբաղդութիւն է ոչ միայն քիւրդերի խաղաղ հարևանների, այլ ամբողջ պատմութեան, ամբողջ քաղաքակրթութեան համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

—

Ընթերցողը կը զարմանայ կարդալով այդպիսի մի վերնագիր։ Սակայն այդպիսի վերնագրով մի յօդուած է զետեղել «Новое Время» լրագրում Մ. Վենիկով, որը աշխատում է համոզել թէ կովկասեան համալսարանը պէտք է բանալ ոչ թէ Թիֆլիսում, այլ Վլադիկավկազում։

Ի հարկէ, Վենիկով ոչ աքի չէ համոզում թէ համալսարանը չը պէտք է լինի Թիֆլիսում—և ոչ մի կերպ չէ կարողանում ապացուցանել թէ համալսարանի բացումը Վլադիկավկազում կարող է նպատակայարմար լինել։ Նա ինքը իր խօսքերով իրան հերքում է և այն՝ ամենավճռական կերպով։ Վենիկովի դատողութիւնները լոգիկական են, քանի որ նա դատում է հանդիստ, առանց զանազան տենդենցիաներ մըցնելու, առանց կողմնակի հաշիւներ տեսնելու ազգութիւնների և քաղաքականութեան տեսակէտից... Իրաւացի կերպով նա նկատում է, որ ռուսաց համալսարանի հիմնելը Կովկասում անհրաժեշտ, անյետաձգելի մի խնդիր է։ Զանազանացեղ, զանազանակրօն ութ միլիոն ժողովուրդ, որ երկար պատերազմներից յետոյ կոչված է խաղաղ քաղաքացիական կեանք սկսելու և միանալու Ռուսաստանի հետ, այլ ես չէ կարող մնալ առանց միացնող ռուս մտաւոր կենտրոնի։ Այդ բանը լսվում է ոչ միայն Կովկասում ապրող ռուսներից, այլ և Կովկասի բնիկներից, օրինակ, հայերից, որոնք գտնվում են այժմ Պարիզի, Ժընեվի, Ցիւրիխի, Վիէննայի բարձրագոյն դպրոցներում և որոնք բացարձակ յայտնում են, որ նրանք կը սովորէին տանը, բայց տեղ չը կայ։

Պրիվիսլենսկի երկրում, որի ազգաբնակութիւնը նոյնքան է, ինչքան Կովկասում, կայ Վարշավայի համալսարանը 2000 ուսանողով։ Իսկ ինչ վերաբերում է Ֆինլեանդիայի, Օստզէյի նահանգների և Սիբիրի ազգաբնակութեան, նրանք բոլորն էլ աւելի սակաւամարդ են, քան Կովկասի ազգաբնակութիւնը։ Ճիշդ է, կարող են առարկել, թէ Ֆինլեանդիայում և Օստզէյի երկրում ազգաբնակութեան կրթական պատրաստութիւնը աւելի բարձր է, բայց Կովկասում էլ վայրենիներ չեն ապրում, որոնց համար անմատչելի լինէր կրթութիւնը։ Ռուսներ, գերմանացիներ, յոյներ, հրէաներ, հայեր և վրացիները միասին կազմում են աւելի քան հինգ միլիոն ժողովուրդ, որոնք ունեն իրանց գրականութիւնը, պարբերական հրատարակութիւնները և մասամբ խօսում են ռուսերէն։

Դրանից յետոյ Վենիկովը ներկայացնելով ռուս տարրի տարածման թիւը, անցնում է իր առաջարկութեան։ Ահա նրա խօսքերը։ «Այն հանգամանքը, որ հիւսիսային Կովկասում ապրում է 2,400,000 ռուս մարդ, մինչդեռ Անդրտիպ ֆրազա. «Մեզ հարկաւոր են ցնցող զգացմունքներ»։ Դա ժամանակակից այլասերութեան օրհասական աղաղակն է։ Այդ երկար անունն ունի այն հիւծախտը, որ ճարակում է մարդկանց այնտեղ, այն կէտի վրա, ուր լրանում է կենդանական իդէալը։ Հասարակ, յափշտակող լեզուով այդ իդէալը կոչվում է նիւթական անկախութիւն, իսկ դա մի հասկացողութիւն է, որ տալիս են փոր, հաճոյք, գրգիռ, ջղեր անունները։ Բաւարարութիւն տալ կեանքը իր հասարակ, բնական դիրքով չէ կարող՝ պէտք է այլանդակութիւն, պէտք է թոյն, որ ներս ծծվէր անբնական պահանջների, գլխիվայր հասկացողութիւնների տէր դարձած կազմուածքի մէջ... Օրգիան վաղանցուկ է լինում. գինին սպանում է հեշտասիրութեան թոյներով տոգորված մարմինը. կանանց անբարոյականութեան կուլտը մաշված, բարակացած կազմուածքները շատ շուտ է տապալում։ Եւ թունաւորվելու բաղձանքով այրվող մարդը վազում է դէպի կանաչ սեղանները։ Հազարներ, տասնեակ հազարներ վազվզում են մէկից դէպի միւսը, որպէս զի հաճոյք պատճառեն քաջքայված սերունդին։ Այդտեղ ահա մէկը խարդախում է թղթերը. բայց դա յանցանքի միակ տեսակը չէ։ Մի ուրիշը տանում է տալիս աղնիւ խօսքով պարտք վերցրած փողերը, որպէս զի միւս օրը հանդիստ խղճով հրապարակ նետէ իր անանկութիւնը. միւսը սեղանի վրա է դնում իր ընտանիքի բախտը, իր հօր կամ եղբօր պատիւը։ Այս ամենը հարկաւոր է, բնական է, անխուսափելի է, քանի որ միջնավայրում ուրիշ մթնոլորդ չը կայ, քանի որ կեանքը դիւթական կատարելատիպ տեսնում է անգործութեան մէջ, քանի որ շրջապատող աշխարհը որ և է պարտաւորութիւն դնել այդ «բախտաւորների» վրա չի յանձնում անթիւ լալայեվներ։ Դատվում էր ոչ թէ մի անհատ, ոչ թէ մի ընտանեկան կազմուածք. դատվում էր մի ամբողջ հասարակութիւն, մի ամբողջ սերունդ, որ թէև քրէական օրէնքների դէմ գործած յանցանքներ չունի, բայց ներկայացնում է յաւիտեան դատապարտված, ամօթալի մի տարր մարդկային բարոյականութեան օրէնքների առաջ...

Կանայք, գինի և խաղաթղթեր։ Եթէ այս է միայն յանցանքի նշանը, այն ժամանակ դատարանը պիտի նիստ կազմէր բաց երկնքի տակ և իր առջև ունենար Բագուի ամբողջ «ոսկի երիտասարդութիւնը»։ Կեանքի իդէալ են այդ բաները բոլոր այն մարդկանց համար, որոնց ողնաշարը երբէք չէ քրտնում հացի խնդրի ստիպմամբ, որոնք իրանց շուրջը տեսնում են պատրաստ անագին ժառանգութիւն և իրանց միակ պարտքն են համարում որոնել կեանք անցկացնելու միջոցներ։ Այդպիսիները մի ամբողջ դասակարգ են կազմում։ Հասկանալի է, որ այնտեղ, ուր ամեն ինչի սկիզբ ու վերջ է համարվում փողը, ուր բանաւոր, մտածող մարդը չբացած է և միայն զգայնութեան, հեշտասիրութեան սեղաններն են պատրաստ կանգնած, այնտեղ կեանք, երջանկութիւն, բարձր հաճոյքներ հասկացողութիւններ են դառնում, որոնք անձնական «եսի», որովայնի, ջղերի ամենակոպիտ պահանջներին են բաւարարութիւն տալիս։ Թղթախաղը այդ զուարճացնող միջոցներից ամենահաստատը, տեսողականն է համարվում։ Երբ դուք առիթ էք ունենում խօսել խաղամոլների հետ, ցոյց տալ թէ նոյն իսկ անձնապաշտութեան, սեփական «եսի» աստուածացման տեսակէտից որքան սպանիչ յանցանք է կանաչ սեղանների շուրջը գիշերներ լուսացնելը, իսկոյն լսում էք այսպիսի ստերէօ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՄՏՔԵՐ

III

Եթէ կամենում էք տեսնել թէ ինչպէս է իրականանում ժամանակակից մարդու հոգին ու միտքը զրաւած կենդանական իդէալը, եթէ ձեզ հետաքրքրում է կեցութեան այն եղանակը, որ պատրաստում է այդ իդէալը թէ անհատների և թէ ամբողջ հասարակութիւնների համար,—մի մի անգամ ձեր ուշադրութիւնը դարձրէք Կովկասեան ոսկեհանքի վրա, ուր ամենակարող և ամենակալ կուռքը—դրամը հրաշքներ է գործում ամեն օր։ Ես խօսում եմ միլիոնների քաղաքի, Բագուի մասին։ Եւ խօսքիս առիթն է այն հանգամանքը, որ այս քանի օրերը այդտեղի նահանգական դատարանում պրոկուրորը իր մեղադրական ճառը հիմնում էր նոյն այն իդէալի վրա, որ մարդկութեան պաշտամունքն է և որը ես անուանեցի կենդանական։ Դատարանի առաջ կանգնած էր այդ իդէալի փայլփլած անհատներից մէկը։ Նա չէր դատապարտվում սպանութեան, առհանգման յանցանքներով, որոնք այնքան հարստացնում են նաւթային քաղաքի առօրեայ պատմութիւնը։ Ոչ, նրա յանցանքն այն էր, որ կեանքի իդէալից շատ և շատ էր օգտվել։ Այդ կողմից դատապարտվածը մի հերոս չէ, ոչ էլ շատ որոշ գծերով առանձնացած մի տիպ։ Դա ընդհանուրի մի անհատական օրինակն է. և միայն պատահական հանգամանքներին պէտք է վերագրել այն, որ իր շրջանի, իր մթնոլորտի հարազատ, սովորական զաւակը դատարանի առաջ մի երևոյթի կերպարանք ստացաւ, երևոյթ, որ ուշադրութեան է արժանացել։—«Լալայեվ խմում էր կեանքի լի բաժակից», ասում էր պրոկուրորը. «նա կեանքի նշանաբան ընտրեց՝ կանայք, գինի և խաղաթղթեր և ասիճանաբար գնում էր անկման ճանապարհով.... Ես չեմ սխալվի, եթէ ասեմ, որ Լալայեվի կեանքը անգործութեան անմիջական, ուղիղ հետևանքն է. ես չեմ սխալվի նոյնպէս ասելով՝ որ այդ անգործութեան մեղը նրա ծնողներն են, նրա ընտանիքը, որոնք ազդեցութիւն չարին նրա վրա, չը կարողացան ներշնչել յարգանք դէպի աշխատանքը, չը սովորեցրին նրան բաւարարութիւն գտնել աշխատանքի մէջ։ Այդ պայմանների մէջ, մեռացածը հեշտութեամբ լրացնում է միջնավայրը. և հետևանքը... յանցապարտների նստարանն է։»—Ահա այդ տեսակ աստառի վրա է հիւսվում այն յանցանքը, որը, պրոկուրորի կարծիքով, յանցաւորը կարող է քաւել Սիբիրում։ Մեղադրվողի պաշտպաններից մէկը շատ լաւ էր հասկացել, որ յանցանքը այս դէպքում,—զարդացած լինելով հասարակական խաղաղ, առօրեայ աշխարհահայեցողութիւնների շրջանում,—միմիայն մեղադրվողին չէ վերաբերվում։ Նա ասաց.—«Դատում են ոչ միայն Լևոն Լալայեվին, այլ նրա հօրը, նրա մօրը, քոյրերին։ Դատաստանական այս գործի անարդող հանգամանքները մրոայլ բիծի նման ընկել են ամբողջ ընտանիքի վրա»։ Փաստաբանը սխալված չէր լինի, եթէ շատ լայնացնէր այն շրջանը, որ մրոտված է այդ յանցանքով։

Ընտանեկան յարկը, որի դէմ պրոկուրորը ուղղել էր իր յարձակումները և որը պաշտպանում էր փաստաբանական պերճախօսութիւնը, շատ նեղ, շատ փոքրիկ մի տեղ է այն յանցապարտ շրջանում, ուր մեծանում և զարգանում են անթիւ Լալայեվներ։ Դատվում էր ոչ թէ մի անհատ, ոչ թէ մի ընտանեկան կազմուածք. դատվում էր մի ամբողջ հասարակութիւն, մի ամբողջ սերունդ, որ թէև քրէական օրէնքների դէմ գործած յանցանքներ չունի, բայց ներկայացնում է յաւիտեան դատապարտված, ամօթալի մի տարր մարդկային բարոյականութեան օրէնքների առաջ...

Կանայք, գինի և խաղաթղթեր։ Եթէ այս է միայն յանցանքի նշանը, այն ժամանակ դատարանը պիտի նիստ կազմէր բաց երկնքի տակ և իր առջև ունենար Բագուի ամբողջ «ոսկի երիտասարդութիւնը»։ Կեանքի իդէալ են այդ բաները բոլոր այն մարդկանց համար, որոնց ողնաշարը երբէք չէ քրտնում հացի խնդրի ստիպմամբ, որոնք իրանց շուրջը տեսնում են պատրաստ անագին ժառանգութիւն և իրանց միակ պարտքն են համարում որոնել կեանք անցկացնելու միջոցներ։ Այդպիսիները մի ամբողջ դասակարգ են կազմում։ Հասկանալի է, որ այնտեղ, ուր ամեն ինչի սկիզբ ու վերջ է համարվում փողը, ուր բանաւոր, մտածող մարդը չբացած է և միայն զգայնութեան, հեշտասիրութեան սեղաններն են պատրաստ կանգնած, այնտեղ կեանք, երջանկութիւն, բարձր հաճոյքներ հասկացողութիւններ են դառնում, որոնք անձնական «եսի», որովայնի, ջղերի ամենակոպիտ պահանջներին են բաւարարութիւն տալիս։ Թղթախաղը այդ զուարճացնող միջոցներից ամենահաստատը, տեսողականն է համարվում։ Երբ դուք առիթ էք ունենում խօսել խաղամոլների հետ, ցոյց տալ թէ նոյն իսկ անձնապաշտութեան, սեփական «եսի» աստուածացման տեսակէտից որքան սպանիչ յանցանք է կանաչ սեղանների շուրջը գիշերներ լուսացնելը, իսկոյն լսում էք այսպիսի ստերէօ-

Կովկասում նրանց թիւը 170,000 անձից աւելի չէ, պարզ որոշում է թէ ուր պէտք է լինի ռուսաց կրթական կենտրոնը Կովկասում. բացի դրանից, չէ կարելի ուշադրութեան չառնել և այն, որ համալսարանը պէտք է լինի ենթադրելի պատերազմական դաշտից դուրս, իսկ այդ կարող է լինել միայն Կովկասեան լեռնաշղթայից աւելի դէպի հիւսիս, ուր պատերազմը նոյնքան հաւանական է, որքան և Սամարայի նահանգում»։ Սակայն փոքր ինչ յետոյ խօսելով այն բանի մասին, որ Կովկասում գործող իրաւաբանները պէտք է գիտենան տեղական լեզուները և հանգամանքները, Վենիկով յայտնում է, որ Հընդկաստանի 240,000,000 ազգաբնակութիւնը կառավարվում է ընդամենը մի 70,000 անգլիացիներով, որոնց մէջ են և 63,000 եւրոպական զինուորները, որոնք իսկապէս չեն խառնվում երկրի վարչութեան մէջ։

Վենիկով չէ նկատում, որ այս փաստը, որ նրան հարկաւոր է եկել իրան մի հանգամանքում, ամենախիստ և վճռական կերպով տապալում է նրա այն միտքը, թէ համալսարան չը պէտք է բացվի Թիֆլիսում։ Ինչու՞ 249 միլիոն հնդիկ ընիկների մէջ կարելի է համալսարան բանալ, ուր միայն 70,000 անգլիացի կայ, բայց չէ կարելի բանալ համալսարան Անդրկովկասում, ուր մօտ հինգ միլիոն ժողովրդի վրա 170,000 ռուս կայ։ Հնդկաստանում սիրող տարրը կազմում է ազգաբնակութեան $^1/_{3429}$ մասը, մինչդեռ Անդրկովկասում մօտ $^1/_{30}$ մասը։

Ի վերջոյ մենք չենք պատասխանի Վենիկովի վիրաւորական խօսքերին, որ նա ուղղել է հայերի դէմ. մենք միայն կարող ենք զարմանալ, որ հեղինակի վրա չէ կարողանում ազդել և այն երկիրը, ուր նա ապրում է և այն քաղաքը, որ գիտութիւններ է ծնել և գիտութիւնների ամենանշանաւոր կենտրոններից մէկն է։—Հեղինակը գրում է իր յօդուածը Պարիզից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Աստրախան, յուլիսի 14-ին

Խնդրում եմ «Մշակի» մէջ տպագրել հետեւեալը. «Յայտնում եմ իմ սրտագին շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք ամսոյս 13-ին շնորհաւորեցին իմ անուանակոչութիւնը, և աղօթում եմ առ Աստուած՝ որ պարգեւի նրանց երկար կեանք և աջողութիւն։

Ջերմեռանդ աղօթարար՝

Արիստակէս Արքեպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը տեսչի պաշտօնի համար հրաւիրել է Լազարեան ճեմարանի ուսուցիչ Կուսիկեանին։

—

Զգուշելի և տխուր պատկեր է ներկայացնում Թիֆլիսի հայոց գերեզմանատունը՝ Խօջիվանքը։ Պարիսպը քարուքանդ, ամբողջ գերեզմանատունը լի կեղտոտութիւններով և ապականութեամբ, ոչ օրինաւոր հսկողութիւն կայ և ոչ պահապաններ։ Շրջմոլիկ մարդիկ ամբողջ օրերը անց են կացնում գերեզմանատանը և «ժամանակ անցկացնելու» համար կամ արձանագրութիւններն են ջնջում, կամ խաչերը և արձանները կոտրտում։ Զարմանալի է, ճշմարիտ, այդ բոլորը տեսնել մի քաղաքում, ուր կայ կօնսիստորիա և առաջնորդ։

—

Լսում ենք, որ մեր երգիչ՝ բարիտոն Բէգլար Ամիրջանեան, որ այս օրերս Թիֆլիս է եկել, հրաւիրված է Մոսկվայի կայսերական թատրոնի խմբի մէջ մասնակցելու։ Եթէ չենք սխալվում, դա առաջին դէպքն է, որ մի հայ երգիչ ընդունվում է կայսերական թատրոնի խմբի մէջ։ Լսում ենք նոյնպէս, որ մի ուրիշ հայ երգիչ, տենոր Արշակ Կոստանեան, որ այժմ Իտալիայումն է, հրաւիրված է մասնակցելու Խարկովի օպերային խմբի մէջ։ Երգիչ Ներսէս Շահլամեան, ինչպէս մեզ հաղորդում են, հաւանօրէն առաջիկայ սեզոնը կերգի Պետերբուրգում, մասնաւոր թատրոններում։ Երգիչ բարիտոն Եղիազարեան Մոսկվայումն է։ Թէ որտեղ կերգի մեր շնորհալի երգչուհի օրիորդ Պապայեան, մեզ յայտնի չէ։

—

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը տպագրելու համար. «Յուլիսի 16-ին Միքայէլեան փողոցի վրա գտնվող Բօբերա լենցի թատրոնում կայացաւ ռուսաց յայտնի ժողովրդական երգիչ Կարագեօրգեվիչի առաջին կօնցերտը։ Խումբը բաղկացած էր մօտ քառասուն հոգուց, որոնցից վեցը իգական սեռից։ Անհամբերութեամբ սպասում էինք վարագոյրի բարձրանալուն։ Վերջապէս բարձրացաւ, անցաւ առաջին բաժանմունքը,—ոչ մի ապաւորութիւն։ Անցաւ երկրորդ բաժանմունքը, և որպիսի հիասթափութիւն. եթէ մեր սպասածի կէսը իրականանար, մենք դարձեալ գոհ կը մնայինք։ Բացատրենք։ Մենք խմբից շատ էինք սպասում, նախ՝ որովհետև Կարագեօրգեվիչը ամբողջ Ռուսաստանում Սլավիանսկուց յետոյ երկրորդն է համարվում, որպէս հմուտ խմբապետ և բացի դրանից՝ խումբը իր մշտականն է և ոչ նորակազմ։ Ահա այս երկու հանգամանքները մեզ կատարեալ իրաւունք էին տալիս շատ աւելի սպասելու, քան թէ տուաց խումբը։ Գալով երգեցողութեանը՝ համարձակ կարելի է ասել, որ այնքան էլ ներդաշնակ չէր։ Կօնցերտի վերջում բեմից յայտնեցին, որ ժողովրդի խնդիրքով (?) հինգշաբթի կը լինի երկրորդ կօնցերտը»։

—

«Тиф. Лист.» հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը հրամայել է, որ Թիֆլիսի Միքայէլեան կամուրջը այսուհետև անուանվի Նիկոլայեան ի յիշատակ Նիկոլայ Կայսրի, որի ժամանակ շինվել է այդ կամուրջը։

—

Ռուսաց սինոդը օգտաւէտ համարելով հոգեւոր դպրոցներում մտցնել այգեգործութեան և պարտիզպանութեան ուսումը՝ կարգադրել է առաջիկայ ուսումնական տարուց բանալ այդպիսի բաժիններ յարմար տեղերում։

—

ՀԱԴՐՈՒԹ գիւղից մեզ հաղորդում են. «Ահա հինգ վեց տարի է, որ խաղողի այգիները սկսել են զգալի կերպով վնասվել խաղողի հիւանդութիւններից։ Գիւղը ունի մօտ հարիւր դեսեատին այգիներ, որոնց արդիւնքը շատ նուազել է, չընորհիւ խաղողի հիւանդութիւնների։ Խաղողը այնքան վնասվում է, որ երբեմն անկարելի է լինում ոչ թէ միայն գինի պատրաստել, այլ նոյն իսկ օղի հանել»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այս օրերս այստեղ եկան դերասան Օհանեանը, օր. Հրանոյշ և Վարդիթեր դերասանուհիները։ Տեղական սիրողների հետ նրանք պատրաստվում են՝ «Մայրական սէր» պիէսը խաղալու»

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Յունիսի 30-ին, Վարդավառի օրը, հայոց թատրոնի դահլիճում կայացաւ մեր դպրոցների ուսուցիչ Սարգիս Ճշմարեանի համերգը՝ Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի օգտին։ Համերգը գրաւել էր երկու սեռի մեծ բազմութիւն և թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։ Բացի բազմաթիւ հայ և վրացի հասարակութիւնից համերգին ներկայ էին նաև հինգ անգլիացի տուրիստներ, որոնք հէնց նոր էին եկել մեր քաղաքը՝ գիտնական նպատակով մեր կողմերը ճանապարհորդելու համար։ Հայկական համերգը անգլիացի հիւրերի վրա այնքան լաւ տպաւորութիւն թողեց, որ հէնց հետեւեալ օրը խնդրել էին խմբին մասնակցող օրիորդներից մէկին, գրել իրանց համար այդ երգերը։ Խմբին մասնակցող օրիորդների և երիտասարդների թիւը հասնում էր 60-ի։ Ծրագիրը կազմած էր շատ գեղեցիկ։ Սօլո և դուէտ երգողներից աչքի էին ընկնում իրանց դիւրեկան ձայնով օր. Շ. Եարալեան և Մ. Եվանգուլեան։ Մուտքի կողմից ևս համերգը շատ յաջող էր. տոմսակների մեծ մասը ծախված էր և չը նայած էժանացած գներին, մուտքը հասաւ 120 ր. 64 կոպէկի. զուտ արդիւնք մնաց ընկերութեան օգտին 101 ր. 75 կոպէկ։ Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը յուլիսի 2-ին կայացած նիստում միաձայն վճռեց գրաւոր շնորհակալութիւն յայտնել ուսուցիչ Ճշմարեանցին՝ ընկերութեան մատուցած ծառայութեան համար»։

—

ՆՈՒԽՈՒ գաւառի Կուտկաշէն գիւղից մեզ գրում են. «Յուլիսի 10-ին գարնանային պարզ օրերից մէկն էր. կապուտակ երկնակամարի վրա մի կտոր ամպ անգամ չէր երևում։ Երեկոյեան ժամի մօտաւորապէս 5-ին, հարաւ-արևմտեան կողմից երևացին մռայլ և մութ ամպեր։ Սկսվեց որոտումը, կայծակը և փոքր ինչ անձրև։ Մի քանի բօպէ ընդմիջումից յետոյ, սկսվեց նոյն կողմից մի աննկարագրելի հողմախառն անձրև. ծառերը ընկճվում էին ահարկու քամու առաջ. տեսարանը սարսափելի էր։ Ցորդառատ անձրևը մէկ կողմից և ուժգին քամին միւս կողմից, մի քանի բօպէի ընթացքում արմատախիլ արեցին, կոտրատեցին թէ վիթխարի և թէ մատաղահաս ծառերը և փչացրին միակ պտուղը՝ խընձորը՝ որ առատ հունձ էր խոստանում։ Այս տարի ուրիշ պտուղներ չը կան, ցուրտը փչացրել էր. միակ խնձորն էր, այն էլ 1000 պուդերով, բոլորովին խակ, գետինը թափվեց։ 3000-ից աւելի ծառեր է փչացրել։ Վնասը հաշւում են մօտ 15,000 ռուբլի։ Մեր քաղաք տեղեկութիւնից երևում է, որ մեծ վնասներ է տուել և շրջակայ Սուլթան-Նուխի, Զարագան, Բում և ուրիշ գիւղերին, նոյնպէս կոտրտել է ծառերը և փչացրել է պտուղները։ Դամուր-Ափարան գետը ևս յորդացել էր և դուրս եկել իր ափերից։ Նոյն իսկ երկիւղ էին կրում թէ կարող է յանկարծ ողողել ամբողջ գիւղը։ Ցորդառատ անձրևներից գոյացած հեղեղները քարուքանդ են արել և տարել իշխան Անդրօնիկովի

դէնի։ Ո՞վ կարող է համարձակութիւն ունենալ երես դարձնել այլանդակութիւնից, ատել այնպիսի օրգանիզմը, որի ամբողջ կեանքը անընական, յանցաւոր զգացմունքներով թունաւորվելն է։ Համարեա՞ ոչ մի բացառութիւն չընդունող օրէնք է, որ կենդանական իդէալին հասած սերունդը ոչինչ կապ չունի կրթութեան, մտաւոր կեանքի հետ։ Ծայրահեղ ագիտութիւնը այն հընոցն է, որի մէջ բովվում է զգայական այլանդակութիւնը։ Սակայն այդ հանգամանքը ոչինչ դժուարացնող դրութիւն, պատժող անպատեհութիւն չէ առաջացնում։ Ընդհակառակը, ամբողջ շրջապատը ոսկի հորթին երկրպագելու համար չափազանց դիւրաթեք պարանոցներից է կազմված։ Այդ պարանոցների շարքերում դուք կը պատահէք ամեն կոչման, ամեն պարապմունքի տէր մարդկանց։ Ամբոխը, նա, որ միայն մասսա է, միայն այն պատճառով է այժ, որ ներկայացնում է համախմբումն, այդ ամբոխը քաշում է իր ետեից նոյն իսկ անկախ մտքերը, այնպիսի անհատներին, որոնք չարն ու բարին որոշելու ընդունակութիւնն ունեն։

Աւելի ևս առաջ գնալով, մենք մեր առջեւը կունենանք ամբողջ քաղաքը, որ իր ծոցում միայն ցնցող տպաւորութիւններին զերի դարձած մարդկանց է մեծարում։ Այդ ընդհանուր գործակցութեան կենդանի, հսկայական նշանը կանգնած է ամեն մի մարդու առաջ, որ մտնում է նաւթի անապատ հայրենիքը։ Դա Բագուի կլուբն է։

Բագուն, կապիտալների այդ ահագին պահարանը, ամբոխի, հասարակ մահկանացուների քաղաք չէ։ Մարդկութեան այն մասը, որ ոսկի է հաւաքում ոչ իր սեփական զրպանի համար, այլ օրավարձ ստացողի պաշտօնով, անարգված է, մոռացված։ Ամեն ինչ զլուխ է իջեցնում փողի առաջ, հրաժարվում է իր մարդկային իրաւունքներից, իր բոլոր յարմարութիւններից՝ փողի տոպրակներին ամեն կերպով փայփայելու համար։ Այդ պատճառով է, որ միայն մի հասարակական հիմնարկութիւն կայ—կլուբը—և դա ամբոխի համար չէ։ Լինել Բագուում և չը լինել տեղային կլուբի անդամ, մի և նոյն է թէ ապրել մի անապատում։ Կլուբումն է Բագուի կեանքը. իսկ դրսում, փողոցներում, գինետուններն են՝ սեացած, քրտինքով այրված ամբոխի համար և արօտաւարներ, որոնց վրա միայն հաշարիներն են կարող տարածվել, ինչպէս ուզում են։ Ամառը, երբ 40 աստիճան տօթը կիզում է անխնայ, դուք մի թշուառ մարդ էք, եթէ կլուբի անդամ չէք։ Քաղաքն ունի մի հատ այգի, ուր դուք որոնում էք մի կտոր թարմ օդ ձեր տապակվող թոքերի համար։ Այդու ամենայնայնմ, փառաւոր տեղը գրաւել է կլուբի ամարանոցն չինութիւնը։ Եւ այն ժամանակ, երբ դուք հաղիւ կարողանում էք գտնել մի չոր նստարանի ծայր, նստել այնտեղ և անշարժ դիտել անց ու դարձ անողներին, այնտեղ, կախարդական շրջապատի ետեւը կայ ամեն ինչ, որին դուք կարոտում էք. լայնարձակ հրապարակ, ազատ նստելու տեղ, ուտելիք, ամեն տեսակ ըմպելիք, երաժշտութիւն։ Այնտեղ, զժոխային ամառվայ տանջանքները մեղմացնելու համար, մարդկային հնարագիտութիւնը ոչինչ չէ խնայել մի քանի հարիւր անդամների համար, իսկ այստեղ, հիմնարկութեան պատերի շուրջը, թրև է գալիս հազարաւոր ամբոխը, թրև է գալիս նեղ ծառուղիներում, անխնայ կոխկռտելով «զոհի» սալայատակը, յոգնում է, շատ անգամ միմեանց վրա թափվում նստարանների վրա։ Կլուբի մուտքի մօտ, մի նեղ և կարճլիկ հրապարակի վրա, տիրում է անհնարին իրարանցում, կոխկռտոց։ Այդտեղ խմբված են այն հասարակ մահկանացուները, որոնք ներսից լվող երաժշտութեան ձայների սիրահարներն են։ Այդպէս է դասակարգային բռնապետութիւնը։ Բագուն իր ընտրեալներին տանում է իր գեղեցիկ այգու ամենալաւ տեղը, շրջափակելով նրան անթափանցելի պատուարներով, իսկ ոչ-ընտրեալներին ուղարկում է կեղտոտ, զզուելի տրակտիրները, ուր մարդիկ անասնական դրութեան են հասնում խեղդող օդի բացարձակ վայրենութեան մէջ։

Եւ սակայն ինչ է այդ կլուբը, որի համար Բագուն շատ և շատ տարրական պարտաւորութիւններ է մոռացել։—Դա այն շրջանն է, որ տալիս է դատաստանական այնպիսի գործ, որի քննութեան ժամանակ հանդիսանում է կենդանական իդէալը իբրև ախտածին շրջան։—Բագուի կլուբը վաղուց յայտնի էր իբրև մի հիմնարկութիւն, որ միայն փախցնել կարող է շատ թէ քիչ մաքուր զգացմունքի տէր մարդուն։ Նրան պակասում էր միայն այն, որ պրոկուրորի ճառի մէջ շանթահարվի.—այդ էլ տեղի ունեցաւ։ «Այս քանը պատահեց ժողովարանում, որը վայելչութեան ոչ մի ապահովութիւն չունի», ասաց նա. «փաստը տխուր է, բայց ճշմարիտ, մեր հասարակաց ժողովարանը այդպէս է»։ Բայց աւելի պարզ չեշտերով, աւելի ազդու գոյներով կլուբը պատկերացրեց մեղադրվածի պաշտպաններից մէկը։ «Բագուի կլուբը, ասաց նա, զրկված է վայելչութիւնից, մարդավարութիւնից։ Տեսէք ինչ մարդիկ են այդ անդամները։ Ամբ Լալաեվը նրանց մէջ մի արծիւ է... Որքան և անզարդացած է նա, որքան և թեթեւամիտ է, բայց բաղմապատիկ խելօք է բոլորից։»—Բացատրութիւնները աւելորդ են...

Մեզ կը մնար խօսել այն տարրերի մասին, որոնք կարող կը լինէին մի քիչ թարմութիւն մտցնել այդ անհնարին մթնոլորդի մէջ։ Կայ, ճշմարիտ է, բազմաթիւ ինտելիգենցիա, բայց նա ամբողջովին սարուկ է փողի տոպրակներին և նոյնպէս աստուածացնում է կենդանական կուլտը։ Ամեն ինչ իջեցրած գծուծ հաշիւներին, պատենտաւոր դասակարգը կենսական խոր իմաստութիւն գտնում է միմիայն առատ կթելու, հաւաքելու մէջ։ Դրա մասին կը խօսենք մի այլ անգամ։ Այժմ պարտաւոր ենք արձանագրել, որ նա էլ մինչև ոսկորների ծուծը վարակված է թղթախաղութեան ջերմախտով։—Բագուի կլուբը, որի մասին այնպիսի սիրունիկ վիճաբանութիւններ են լինում դատարանում, ինտելիգենցիայի համար էլ աւետեաց երկիր է։ Տղերիս զրողը Բագու նոր եկած մի ինտելիգենտ մարդուն հակացնում էր, թէ ինչ է կլուբը։ Բայց նա անդամ գրվեց, ասելով, որ առանց կլուբի կարելի է վայրենանալ, երբէք չը լինել մարդկանց հասարակութեան մէջ։ Այդ բոլորովին անուրանալի էր։ Սակայն մի քանի ժամանակից յետոյ նոյն ինտելիգենտը, որ կլուբ մտել էր սոսկ մարդկանց հետ տեսնվելու, գրաղարանից օգտվելու համար, սկսեց թուղթ խաղալ, հաւատացնելով, որ ուրիշ կերպ անհնարին է. հօ չէ կարելի, ասում էր, գնալ և ամբողջ ժամերով ջուր ծեծել մի որ և է վաճառականի հետ կամ լսել որ և է փոքրիկ բուրժուայի դատարկաբանութիւնները։—Այդ էլ միանգամայն անուրանալի էր։

Ուրեմն, շրջանը, ամբողջութիւնը, ընդհանուր մթնոլորդը չէ կարող ուրիշ երևոյթ արտադրել։ Բացի միակ երևոյթից, բացի կենդանական կուլտից, ուրիշ ամեն մի բան, ամեն մի ձգտում, վայրենի, ծիծաղելի, անտեղի է և պատուաստի ընդունակութիւնից միանգամայն զուրկ...

Լ.

կոչված կամուրջը, որ Կուտկաչէնից դէպի Նուլի տանող խճուղի ճանապարհի վրա էր»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Յուլիսի 14-ին կը-լուբի դահլիճում տեղի ունեցաւ ուսուցիչ Ս. Դեմուրեանի «Հայկական համերգը, որի վերջը՝ սիրողները, մասնակցութեամբ դերասան Յարութիւնեանի, խաղացին «Էս էլ քի մօցիքլութիւն» վոդեվիլը։ Երգեցիկ խումբը, որ բաղկացած էր մօտ 50 հոգուց, երգում էր գեղեցիկ և ներդաշնակ։ Դահլիճը ծայրէ ի ծայր լի էր։ Մեծ ոգևորութիւն առաջ բերեց «Ցուր ձեռքդ, եղբայր» երգը։ Պ. Դեմուրեանը ահա երկու տարի է ինչ վարում է Գօրում հայոց ուսումնարանի երգեցողութեան ուսուցչի պաշտօնը. երէցփոխների յանձնարարութեամբ նա Գօրու բոլոր հայ եկեղեցիների համար պատրաստեց խմբեր՝ հայոց ուսումնարանի, սեմինարիայի և քաղաքային ուսումնարանի աշակերտներից և, պէտք է ասած, պատրաստեց մեծ հմտութեամբ։ Այստեղի մայր-եկեղեցում երգող քառաձայն խումբը մի պերճախօս ապացոյց է պարոնի բարեխղճութեան։ Համերգի առաջին բաժանմունքի վերջը խմբապետը ստացաւ մի ընծայ՝ գեղեցիկ ալբօմ, այստեղի հայ երիտասարդներից։ Լաւ էր նաև դերասան Յարութիւնեանը։ Սիրողներից լաւ էին օր. Խիթարեանը, և ուսուցիչ Միրիմանեանը»։ Նկարագրելով այդ բոլորը, թղթակիցը աւելացնում է. «Յաւելով պէտք է ասենք, որ այսպիսի մի գեղեցիկ գործ ունեցաւ մի քանի անհաշտ թշնամիներ՝ յանձին այստեղի մի քանի և իրանց ինտելիգենտ համարելու յատկութիւն ունեցող պարոնների։ Թղթամոլ «ինտելիգենտները» ոչ մի կերպ չէին կամենում հաշտվել այն մտքի հետ, որ այնտեղ, ուր տարին տասներկուսիս լսվում են «կոզիր, պաս» և ուրիշ՝ իրանց սրտին այնքան մօտիկ բառեր, մի գիշեր զոնէ հնչէր մայրենի երգեցողութեան քաղցր հնչիւնները»։

—

ԿԱՂԶՎԱՆԻՑ մեզ գրում են. «Մի տգէտ և անարժան անձ, դիմելով զանազան միջոցների, կամենում է քահանայ ձեռնադրվել։ Այդ մարդը մի ժամանակ ծառայել է ոստիկանատանը և յայտնի է դարձել անբարոյական վարքով։ Ինչու համար են այդ տեսակ անարժանների ձեռնադրութիւնը, քանի որ մեր քաղաքը ունի 300 տուն բնակիչ և երեք քահանայ, որոնք հազիւ են կարողանում ժողովրդի տուրքով ապրել, այնպէս որ, չորրորդ քահանայ և այն էլ մի անարժան անձը՝ կատարեալ պատուհաս կը լինի Կաղզվանի հասարակութեան»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են յուլիսի 10-ից. «Ամառվայ շոգերը արդէն սկսվեցին և մեր ինտելիգենտ դասակարգը հեռացաւ քաղաքից, այնպէս որ այդ կողմից՝ մեր քաղաքը այժմ մի մեծ գիւղ է ներկայացնում։ Քաղաքային այգում, առաւօտեան ժամերին միայն մի քանի հոգի են երևում։ Իսկ երեկոյեանները զբօսնողները խմբվում են գլխաւորապէս անգլիական այգին, ուր կայ զբօսարան՝ նուագարանով և բուֆետով»։

—

ՍՏԱՒՐՕՊՕԼԻՑ (Կովկասեան) մեզ գրում են. «Յուլիսի 11-ին մեր եկեղեցու երէցփոխ Մ. Նապալեանը, տանիքից ընկնելով՝ ստացաւ մահացու վէրք և նոյն օրը վախճանվեց։ Նրա մահը զգալի է մեր եկեղեցու համար։ Նրա օրով են կատարվել մեր եկեղեցու նորոգութիւնները և նոյնպէս նրա օրովն է եկեղեցին խնայել իր փոքրիկ գումարը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ադանայից և Մարաշից հաղորդում են, որ հանգստութիւնը վերականգնված է և քրիստոնեաները չեն յուզվում։ Սակայն Բիթլիսի կողմերում դեռ շարունակվում են քիւրդերի առգակային ասպատակութիւնները։ Բիթլիսից տասն և հինգ մղոն հեռու գտնվող մի գիւղում քիւրդերը Նորերս սպանեցին քսան մարդ. ազգաբնակութիւնը թողեց գիւղը և փախաւ։ Կառավարութիւնը սակայն դժգոհ է այդ բանից և աշխատում է նոր անկարգութիւնների առաջն առնել։ Սամսօնում լաղերը և քիւրդերը յանդուգն կերպով սպառնալիքներ են անում քրիստոնեայ ազգաբնակութեան և շատ մահմէտականներ յայտնում են իրանց դժգոհութիւնը այն կառավարիչների դէմ, որոնք զսպում են նրանց։ Հերակի թիւրքերը խնդիրք են տուել կառավարութեան, որ նա հեռացնի կառավարչին, որովհետև սա թոյլ չէ տուել կոտորել հայերին և մինչև անգամ պատժել է տուել թիւրքերին։

—

«Daily News» լրագիրը իր առաջնորդողների բաժնում նուիրել է մի քանի ջերմ խօսքեր անգլիական հասարակութեան, որ համակրութեամբ վերաբերվեց դէպի հայերի վիճակը և կատարեց իր մարդասիրական պարտաւորութիւնը՝ տալով նպաստներ, Դրանով, ասում է լրագիրը, մենք ցոյց տուինք, որ միայն խօսքերով չենք արտայայտում մեր զգացմունքը, այլ և գործով, որ անգլիական ազգը իր սրտին մօտ է առել հայերի վիճակը։ Սակայն թշուառութիւնը դեռ շարունակվում է. դեռ քաղցած, անտուն մարդկանց թիւը շատ է և մենք մեր պարտքը լրացրած չենք լինի, եթէ չը շարունակենք նպաստներ ուղարկելը։ Լրագրի նոյն համարում յայտնված է, որ Ֆիլիպ Կէրրիի կարծիքով, բոլոր կարիքները կը հոգացվեն, երբ ժողովարարութիւնը կը հասնի 100,000 ֆունտի։ Այժմ նպաստ բաժանող վարչութիւններ գտնվում են քսան քաղաքում և շաբաթական հարկաւոր է 3,000 ֆունտ ստերլինգ նրանց գործունէութեան համար։

—

Անգլիայի հոգևորականները շարունակում են ջերմ կերպով վերաբերվել դէպի Փոքր-Ասիայի քրիստոնեաները։ Կենտրբերիի կրօնական ժողովը յուլիսի 7-ին որոշեց ուղարկել հետևեալ համառօտ շրջաբերականը, որը քուէարկութեան միջոցին ընդունվեց միաբերան։ «Ատեանը ցանկանում է եկեղեցու անդամներին մասնացոյց անել մի պարտաւորութեան վրա՝—ուղարկել Փոքր-Ասիայի թիւրքական նահանգների կարօտ և թշուառ քրիստոնեաներին նպաստներ՝ թէ իբրև ցաւակցութեան նշան դէպի նրանց տխուր վիճակը, և թէ իբրև երախտագիտութեան և յարգանքի նշան քրիստոնէական հաւատին հաւատարիմ մնալու համար»։

—

«Ռէյտէրի գործակալութեան» Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է, յուլիսի 8-ից, հետևեալը. «Մինչև երեք հարիւր հայ Կ. Պոլսից ուղարկեցին Անատոլիայի զանազան կողմերը՝ այն պարտականով, թէ նրանք առանց պարապմունքների են։ Միւս կողմից երեսուն և վեց հայ և քաղմաթիւ թիւրքեր ուղարկվեցին Բենղազի՝ իբրև յեղափոխականներ»։

—

Նիւ-Եորկում հրատարակվող մի լրագիր հաղորդում է հետևեալ լուրերը, իբրև մինիմարական երևոյթ. «Ֆրանսայի մէջ կաթոլիկներն, ի գլուխ իրենց ունենալով զհայր Շառմթան, կը շարունակեն ի նպաստ Հայաստանի հանգանակութիւնը։ Հանգանակութիւն անել սկսած են նաև Գերմանիոյ բողոքական երիցունք վասն հայ տառապելոց»։

«Նիւ-Եորքցի հայ մը վերջերս տեսակցեցաւ Ամերիկայի կաթոլիկներու երկու մեծագոյն եկեղեցականաց հետ, որք խոստացան ամառուան ցրօնքէն յետոյ նախաձեռնութիւն յանձն առնուլ հանգանակութիւն անելու ի նպաստ հայկական դրամագլխոց»։

«Ամերիկայի հանրապետականք, որք չուտով իշխանութեան պիտի անցնին, հուշակեցին պաշտօնապէս, թէ իրենց խնդիրներուն մէջն ալ հայկականն պիտի լինի»։

—

Կ. Պոլսի մեր թղթակիցը, այնտեղի լրագիրներից առնելով, ուղարկել է մեզ հետևեալ՝ թիւրքական բռնութեան ապացոյց՝ նոր փաստը. «Սապահ» կը տեղեկանայ, թէ Էրզրումի վերաքննիչ ատեանը մահուան դատապարտեր է հետևեալ անձերը. Տելի Սաֆօ, Ղազար՝ Սաֆօյի որդին, Գրիգոր, Մարտիրոս, Դաւիթ, Ալիքսան, Ստամպօլլուեան Գէորգ, Արսլթ. Մարգար, Պետրոս և Եղիա։ Վերջի հինգ անձերը փախստական են։ Այս անձերը ընկել Մամրվանի Վիքհաս գիւղէն, սպանած էին այդ կողմը գտնուած Հիճվէ-Իւլիա գիւղին մէջ Սալիհ աղան և շատ մը ուրիշ անձեր։ Վերաքննիչ ատեանը որոշեր է ասոնց պատիժը գործադրել»։

—

Դրուզների ապստամբութիւնը շարունակվում է, չը նայելով այն հանգստացնող հեռագիրներին, որ ուղարկվում են Կ. Պոլսից։ Պարիզի «Temps» լրագրին այդ առիթով գրում են.

«Հաուրանում նոր նահանգապետ Մուստաֆա փաշան այս օրերս 25 վաշտ զօրքով և չորս թնդանօթներով յարձակվեց 7,000 դրուզների վրա։ Յարձակումը յանկարծակի էր և ետևից, այնպէս որ Կ. Պոլսում համոզված էին, որ ապստամբների ջարդը կատարեալ է և որ այժմ կարելի է ապստամբութիւնը ճնշված համարել։ Բայց իսկապէս գործի դրութիւնը ուրիշ է։ Զինուորված ապստամբները 8—10 հազար են. նրանք յետ քաշվեցին դէպի երկրի ներսը, նախապէս Լէուրա ուղարկելով կանանց, երեխաներին, հօտերը և հաւաքած հունձի մի մասը։ Մնացած մասը ոչնչացրին, իսկ ջրի աղբիւրները թունաւորեցին։ Դրուզների դէմ արշաւանքը այդպիսով շատ դժուար է մի երկրում, ուր չը կայ ջուր, կենսական մթերքներ և ուր զինուորները չունեն ոչ շոր և ոչ էլ կերակուր։ Զմեռվայ ընթացքում թիւրքաց զինուորները, ոչ մի հրացան չարձակելով 5,000 հոգի կորցրին հիւանդութիւններից։ Ուրիշ տեղեկութիւնների համեմատ, դրուզները յետ քաշվեցին դէպի Լէդրա։ Եթէ այդ տեղեկութիւնը ճշդվի, թիւրքերը կարող են ապստամբներին հալածել միմիայն քառասուն հազար հոգուց բաղկացած զօրաբաժին ունեցած ժամանակ, որովհետև երկիրը անծանօթ է և հաղորդակցութիւնը շատ դժուար»։

—

«Нов. Время» լրագիրը, իր վերջին առաջնորդողներից մէկում խօսելով Կրետէի ապստամբութեան մասին, ի միջի այլոց ասում է հետևեալը. «Աւելի էլ անախորժ է, որ կրետացիներ գործերում յամառութեամբ ցանկանում է միջամտել Կրետէի կարօտ ազգաբնակութեան օժանդակող այսպէս անուանված Լօնդոնի կոմիտեատը։ Մենք հաղորդեցինք, որ մարկիզ Սալսբիւրի և Կէրզոն հրաժարվեցին նպաստել կոմիտեատի մտադրութեան—այն է էմիսարներ ուղարկել Կրետէ՝ նպաստներ բաժանելու կրետացիներին, որոնք կարող էին ծուռ մեկնել անգլիացիների գալու նպատակը։ Հէնց այդ հանգամանքը աչքի առջև ունենալով, հինգ մեծ պետութիւնները բողոքեցին Լօնդոնի կոմիտեատի ձեռնարկութեան դէմ։ Մարկիզ Սալսբիւրի չը ցանկացաւ գնալ ուրիշ մեծ պետութիւնների դէմ, բայց կոմիտեատը, որ գտնվում է Ռէստմինսթարեան դուքսի նախագահութեան տակ, որը նախագահում է նոյնպէս և Լօնդոնի հայկական կոմիտեատում, չը համաձայնվեց առաջին մինիստրի և Կէրզոնի պատճառաբանութիւնների հետ, և այնուամենայնիւ որոշեց մինչև անգամ մի ամբողջ միսիա ուղարկել Կրետէ կղզին։ Լօնդոնի պահպանողական շրջաններում ձգտումն է երևում դէպի աւելի եռանդոտ քաղաքականութիւն Արևելքում, և այդ բանը պէտք է ի նկատի ունենայ թէ մարկիզ Սալսբիւրի, և թէ եւրոպական դիպլոմատիան»։

ՊԱՊԸ ԵՒ ՆՈՐ-ԿԱԹՕԼԻԿՆԵՐԸ

—

Մենք հաղորդեցինք, որ Հռոմի պապ Լէոն XIII-րդ մտադիր է մի կօնդակ կամ էնսիկլիկ հրատարակել քրիստոնէական եկեղեցիների միութեան մասին։ Այժմ ֆրանսիական լրագիրներում համառօտ կերպով հաղորդվում է նոր կօնդակի բովանդակութիւնը։ Կօնդակը ուղղված է կաթոլիկ եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին և պարունակում է 112 վկայութիւններ ս. գրքից և եկեղեցու հայրերի հեղինակութիւններից։ Նա սկսվում է այս խօսքերով՝ «Satis Cognitum»։

Այդ կօնդակի մէջ պապը բացատրում է եկեղեցու կազմակերպութիւնը, որի հիմքը կազմում է միութիւնը։ «Եկեղեցին, իրականապէս, բաղկացած չէ առանձին քրիստոնէական համայնքներից, այլ մի է և անբաժանելի։ Այդ այն եկեղեցին է, որը Քրիստոս անուանեց Իրանը։ Իր վարդապետութիւնը կեղծ մեկնութիւններից ազատ պահելու համար, Քրիստոս ընտրեց առաքեալներ և եկեղեցու մշանջենաւոր անվիճելի պետ։ Եկեղեցին երբէք չէ ձգտում գրաւել քաղաքացիական ասպարէզ և գերագոյն իրաւունքներ, և մեղադրել նրան այդ բանի մէջ—կը նշանակէ զրպարտել նրան։ Եկեղեցին ներկայացնում է մի հասարակութիւն, որ բարձրանում է բոլոր մնացածներից, որովհետև նա ձգտում է ամենաբարձր նպատակների։ Հասարակութիւնը կարող է կատարեալ լինել միայն այն ժամանակ, երբ նա հնազանդվում է բարձրագոյն իշխանութեան։ Քրիստոս հաստատել է իշխանութեան միութիւն և յանձնել է այդ իշխանութիւնը Պետրոսին և նրա յաջորդներին։ Ոչ ոք չէ կարող դնել աթոռ հռոմէական աթոռի հետ միատեղ. նրա իշխանութիւնը չէ ենթարկվում ոչ ոքի կենտրոնի»։

Այդպիսի լեզուով և այդպիսի խիստ ապացոյցներով փաստաբանել եկեղեցիների միութեան անհրաժեշտութիւնը, այդ մի և նոյն է, թէ աւելի անջատել այդ եկեղեցիները միմեանցից, որովհետև եթէ քրիստոնեայ եկեղեցիները լսելու լինեն պապին, պէտք է նրանք պարզապէս հպատակվեն նրան, իսկ միութիւն տէրի և հպատակի մէջ՝ անկարելի է. միութիւնը հնարաւոր է միայն հաւասարների մէջ։ Այդ պատճառով շատ իրաւացի է նկատում «Times» լրագիրը, ասելով. «Երբ ամենքը կը հասկանան, որ «միութիւն» խօսքը նշանակում է պարզապէս հպատակութիւն Հռոմին, այն ժամանակ բոլոր վէճերը այդ առիթով կը դադարեն։ Բողոքականութիւնը անգլիական պատմութեան մէջ մեծ իրողութիւն է կազմում և անջնջելի հետք է թողել ժողովրդի բարոյական, քաղաքական և մտաւոր կեանքի մէջ»։

ԳԱՐԱԿԷՈՉԵԱՆ ԿՏԱԿԸ

—

«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Խառն ժողովը նիստ ըրաւ երէկ, Սրբազան Պատրիարք Հօր նախագահութեան տակ, Պատրիարքարանի մէջ։ Ժողովին կարդացուեցաւ ողբացեալ բարեյիշատակ Տիգրան Գարակէօզեանի կտակը, զոր փաստաբան Յակոբեան էֆէնտի, հանգուցեալին մտերիմ բարեկամը, բերած յանձնած էր Սրբազան Պատրիարք Հօր։ Այս կտակով հանգուցեալը իր հարստութեան մէկ երրորդը կը թողու հայ կրթական և բարեգործական վեց հաստատութիւններու։ Այս թիւին մէջ կը գտնուի նոր հաստատուելիք վաճառականական վարժարան մը։ Այս մեծաճոխ կտակին ընթերցումէն յետոյ, խառն ժողովին անդամները ոտքի ելան, և ունկնդրեցին «Հոգւոց»-ի աղօթքը, զոր եկեղեցական անդամները միաբերան կարդացին հանգուցեալ կտակարարին հոգուն համար։ Այս կրօնական արարողութենէն յետոյ, Սրբազան Պատրիարք Հայրը սրտառուչ խօսքերով վեր հանեց այս բարեգործութեան մեծ կարևորութիւնը և յիշեցուց այն ամենադառն կսկիծը, զոր հանգուցեալին մահը ազգին ազդած է։ Կտակը պիտի պահուի Նորին Սրբազնութեան քով։»

Այդ առիթով Կ. Պոլսի մեր թղթակիցը հաղորդում է, որ կտակի գումարը հասնում է մօտ $1^1/_2$ միլիոն ռուբլու։ Սակայն փողերը դեռ ևս յանձնված չեն պատրիարքարանին։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

—

Վան, յունիսի 25-ին

Անցեալ շաբաթ կուսակալ Նազիմ փաշա հրաժարական տուաւ, և ընդունվեց այդ հրաժարական։ Անոր տեղ առժամապէս նշանակվեց սուլթանի ներկայացուցիչ-քօմիսէր Սաատ-էդդին փաշա։

Զինուորական ատեան մը կազմվեց, ապստամբները և չարագործները գտնելու և պատժելու համար։

Տեղւոյս կաթոլիկ միսիոնարներէն հայր Դիւ-Ֆրանս նշանակված է ֆրանսիական դեղեցատ։

Մի շաբաթ առաջ ռուսաց փոխ-հիւպատոս պ. Վլադիմիր, որ կարճ ժամանակով մեկնել էր Թիֆլիս, վերադարձաւ հոս։

Ազգային առաջնորդարանի, հիւպատոսարաններու և միսիոնարաց տներու ու պարտէզներու մէջ մօտ 25,000 կարօտեալներ խռնված ապաստանած են։ Աւելացրէք դրա վրա 15 հազարի չափ քաղաքացի կարօտեալներ, և այդ ամենը անտուն, մերկ, անօթի։ Օրական 15,000 սօմոն հաց է պէտք առնուազն այդ բազմութիւնը սովամահ լինելէ ազատելու համար։ Մեռնողները անպակաս են։ Խօլերայէ կը վախնանք։ Իսկ սովը արդէն ակներև է։

Մ—դ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թաւրիզից, «Нов. Обозрѣн.» լրագրի թղթակիցը հետևեալ հետաքրքիր տեղեկութիւններն է հաղորդում յուլիսի 4 ից. «Անցեալ ամսի վերջը կայացաւ բարձրագոյն խորհուրդ, ուր Մուզաֆէր-Էդդին Շահը յայտնեց, թէ սրանից յետոյ արտասահման գնալը թոյլ է տրվում միայն վաճառականներին, և այն էլ 5—10 անձանց երաշխաւորութեամբ։ Արտասահմանեան անցագիրների համար վճարը նշանակված է 10 թուման։ Շահի այդ կարգադրութեան չարժառիթն այն է, որ շատ պարսկահպատակներ, արտասահման գնալով, թողնում են իրանց ընտանիքները ճակատագրի կամքին, իսկ իրանք յաճախ չեն վերադառնում։ Օտարութեան մէջ նրանց սպանում են, պատժում են զանազան յանցանքների համար, և այլն։ Մի և նոյն ժամանակ պարսից կառավարութիւնը պէտք է գրագրութիւն սկսի հարևան պետութիւնների հետ՝ պահանջելով հայրենիք ուղարկել այն բոլոր պարսկահպատակներին, որոնք որոշ զբաղմունքներ չունեն։ Իսկ ազգաբնակութեանը ապրուստի միջոց տալու համար հայրենիքում, Շահը խոստացել է գործարաններ բանալ։ Բացի դրանից, իւրաքանչիւր նահանգական քաղաքում պէտք է հիմնվեն դըպրոցներ, ուր չքաւոր ծնողների զաւակները կընդունվեն անվարձ։

—Պետութիւնների վերջին առաջադրութիւններին դեռ չը պատասխանած՝ Թիւրքիան իր զօրքերով աշխատեց բռնել Ալօկօրօն գաւառի ռազմագիտական նշանակութիւն ունեցող կէտերը։ Այդ զօրքերը երկու տեղ պարտութիւն կրեցին։ Թիւրքերի յաղթութիւնը Հաւրանում չափազանցնում են։ Դրուզների դիմադրող ոյժը երկրի մէջ, մանաւանդ լեռնային տեղերում, դեռ շատ մեծ է։ Վերջին օրերս տեղի են ունեցել մի քանի ընդհարումներ։ Դեռ շատ ժամանակ կանցնի, մինչև երկիրը կատարելապէս կը խաղաղվի։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Figaro» լրագիրը հաղորդում է, որ Էմիլ Զօլան կրկին իր թեկնածութիւնն է դնում ֆրանսիական ակադէմիայում, նորերս վախճանված Ժիւլ Սիմոնի տեղ։ Կան և երկու ուրիշ թեկնածուներ։ Ընտրութիւնները տեղի կունենան փետրվարին։

* * *

Անդրկովկասի գիւղերում ահա տասն և հինգ տարի կայ, որ սկսվել է կատարելագործված մեքենաների և գործիքների գործածութիւնը, սակայն սկզբներում, երբ փորձնական շրջանի մէջ էին մեր գիւղատնտեսները, գնում էին մեքենաներ քիչ և պատահաբար։ Վերջին տարիներս գիւղատնտեսական գործիքները սկսում են զգալի կերպով տարածվել և մի քանի առևտրական տներ յատկապէս զբաղված են այդ գործիքների վաճառման գործով։ Թէ որչափ ժամանակ են անտեսում և ինչքան աշխատանք են փոխարինում մեքենաները, այդ երևում է Հարաւային Ռուսաստանի կալուածքներում տեղի ունեցած փոփոխութիւններից։ Կրիմում առաջ մի դեսեատին ցանքը հնձելու և ժողովելու համար տալիս էին 15—20 և մինչև անգամ 25 ռուբլի. իսկ ներկայումս ոչ աւելի քան 3—4 ռուբլի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի։ Ծովային մինիստրութեան կառավարիչ գեներալ ադիւտանտ ծովապետ Զիխաչով Ամենաողորմածաբար արձակվում է, իր խնդիրքի համաձայն, այժմեան պաշտօնից, մնալով պետական խորհուրդի անդամ և գեներալ ադիւտանտի կոչումի մէջ։ Փոխ-ծովապետ Տիրտով նշանակվում է ծովային մինիստրութեան կառավարիչ։

ԼՅԻՇՏԱԴՏ (Բավարիայում), 15 յուլիսի։ Սաքսոնական Մաքսիմիլիան արքայազնը, աստուածաբանութեան եռամեայ դասընթացն աւարտելուց յետոյ, այսօր քահանայ ձեռնադրվեց։

ԿԱՅԻՐԷ, 15 յուլիսի։ Խալերայից մեռան անգլիական երեք օֆիցէրներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յուլիսի։ Յուլիսի 15-ին, երեկոյեան, Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնա և Օգոստափառ գեներալ-ծովապետը ճանապարհ ընկան դէպի Նիժնի-Նովգորոդ։ Նոցա Կայսերական Մեծութիւններին ուղեկցում են օբէր-հոֆմէյստէրուհի պայծառափայլ իշխանուհի Գոլիցինա, Կայսերական պալատի և զինուորական մինիստրները, գեներալ-ադիւտանտ Ռիխտէր, գեներալ Դէսսէ, հոֆմարշալ կոմս Բէնկէնդորֆ, հոֆմէյստէր կոմս Գէնդրիկով։ Կայսերական գնացքի կոմենդանտ է գեներալ-մայոր Շերինկին։ Կայսերական գնացքից մէկ ժամ առաջ ճանապարհ ընկան Նիժնի՝ Կայսերական պալատի մինիստրի օգնական բարոն Ֆրէդէրիկս, գեներալ-ադիւտանտ կոմս Գոլենիչչէվ-Կուտուզով, Նորին Մեծութեան սվիտայի փոխ-ծովապետ Լոմին, ֆլիգէլ ադիւտանտ կոմս Շերեմետէվ, պալատական նկարիչ Զիչի։

ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, 15 յուլիսի։ Այսօր հասան երկրագործութեան և հաղորդակցութեան ճանապարհների մինիստրները։ Երէկ հասաւ Նորին Մեծութեան թիկնապահ գունդը։

Արքայական գնացքի գալու համար տօնավաճառը և քաղաքը չքեղ կերպով զարդարված են։

ԼՕՆԴՕՆ, 16 յուլիսի։ Կ. Պոլսից հաղորդում են, որ այնտեղ հասաւ Կրետէից Աբդուլահ փաշան։

«Times» լրագրին Կանէից հեռագրում են. «Ազգային ժողովը, կղզու վրա տիրող ընդհանուր թշուառ դրութեան պատճառով, որոշեց թոյլ տալ երեք ամսով յետաձգել պարտքերի վճարումը։ Ընդհանուր նահանգապետը հաստատեց այդ որոշումը»։

ՅԻՒՐԻԽ, 16 յուլիսի։ Շաբաթ գիշերը քաղաքի մի բնակիչ սպանվեց երկու իտալացիների ձեռքով։ Այդ պատճառով Յիւրիխում կազմակերպվեց մի տեսակ կամաւոր պահնակախումբ, որը երէկ, թէև մի քանի հարիւր մարդ, սկսեց ջարդել իտալական հիւրանոցները։ Ասում են, որ վիրաւորված են մի քանի մարդիկ։ Ոստիկանութիւնը կալանաւորեց խռովարարներից մէկին։ Ամբոխը ուղեկցեց կալանաւորին մինչև ոստիկանատուն, ուր նոյնպէս ջարդեց պատուհանները և դռները, բայց կալանաւորներին ազատել չը կարողացաւ։ Կալանաւորված են 12 հոգի. 6 բանտարկված են։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 16-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94	ր. 05	կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	» 95	»
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	» 30	»
Ոսկի — — արժէ . .	7	» 50	»
Մաքսային կուպոններ — . .	149	» —	»
Բօրսային դիսկոնտ — . .	$5^1/_4$	» $7^0/_0$	»
$4^0/_0$ պետական բէնտա	99	» —	»
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.	288	» —	»
— — երկրորդ —	254	» —	»
$5^0/_0$ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$212^3/_4$	—	»
$5^0/_0$ պետական երկաթուղ. բէնտա	$100^3/_8$	—	»
$4^0/_0$ ներքին փոխառութեան . . .	99	—	»
$4^1/_2{}^0/_0$ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$100^3/_4$	—	»
Ազն. կալ. պետ. բանկի խաղարկութ.	—	—	»
$4^1/_2{}^0/_0$ վկայակ. գիւղ. հող. բանկի	$100^3/_4$	—	»
Փոխ. կրեդիտ. ընկեր. մտալ. .	—	—	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	$101^1/_4$	—	
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^1/_4$	—	»
Սղէսայի — —	$100^1/_2$	—	»
Թիֆլիսի — —	99	—	»
Թիֆլիսի կալ. բանկի $6^0/_0$ — . .	$102^1/_2$	—	»
$5^0/_0$ — — — . .	$99^1/_2$	—	»
Քուտայիսի — $6^0/_0$ . .	$102^1/_2$	—	»
$5^0/_0$ — — — . .	$99^1/_2$	—	»

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ՍԹԷՄՖԷՐՏ (Ամերիկա). Կ. Պ. Զաքմաքճեան. Ստացանք ձեր նամակը, բայց ծրարի մէջ ոչինչ փող չը գտանք, թէև դուք գրում էք թէ ներփակել էք 10 դոլլար։ Բարեհաճեցէք պարզել այդ թիւրիմացութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПРОДАЕТСЯ

пустопорожное мѣсто земли съ разрушенными на немъ постройками, въ 7 участкѣ гор. Тифлиса, въ Навтлугѣ, на Рейтерской улицѣ, близъ имѣнія Рейтера. Объ условіяхъ узнать въ гор. *Новобаязетъ* (Эриванской губерніи), адресуя на имя Наталіи Семеновны Гаковой. (№ 82) 1—2

ԵՒԼԱԽ կայարանում կորված է 21 հատ կլիշա և ԼԵՏՈՒՐՆՕԻ „ԸՆԿԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ“ գրքի հայերէն թարգմանութեան ձեռագիրը։ Գտնողը կամ այդ մասին տեղեկութիւն տուողը մեծ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ կը ստանայ։ Դիմել՝ ՇՈՒՇԻ, Ե. Լալայեանին, ԵՒԼԱԽ՝ „Նադեժդա“ ընկերութեան, ԹԻՖԼԻՍ՝ Ռօտինեանի տպարանը։ (№ 80) 3—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Որոնում եմ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ

կամ մի այլ պաշտօն։ Գիտեմ ռուսերէն և հայերէն կարդալ և գրել։ Հասցէն՝ Солдатскій Базаръ, домъ Мухранскаго, Давитханову. (№ 82) 1—4

ՊՐՕՎԱՆՍԱՅԻ ՁԻԹ

ՅԱՅՏՆԻ ԿԷՕԼԷՐԵԱՆ

պատրաստված Նիցցայում, առանձին ցուցմունքով, ծախվում է

ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ

նշանաւոր առևտրականների մօտ։

Այդ ձէթը միայն պատրաստվում է մայիսին և միայն թարմ հաւաքված, կատարելապէս հասած և ընտիր ձիթապտուղներից։

№ 82 (13) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆԸ

Նախկին տարիների պէս այս ամառվայ ընթացքում էս ընդունում է ԷՍՍԵՆՏՈՒԿՈՒՄ ներքին և միզի հիւանդութիւն ունեցողներին։ (№ 60) 9—10

Մի հայուհի կամենում է դասեր ունենալ 7—10 տարեկան, մէկ կամ երկու աղջիկ-երեխաների հետ, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներից և մուզիկայից։ Համաձայն է մտնել կօմպանիոնկայ և գնալ ուրիշ քաղաքներ. հասցէն. Старо-Арсенальная улица, домъ № 9. 2—4 (№ 81)

ԿԷՕԼԷՐԻ ՅԱՅՏՆԻ ՀՈՏԱՒԻՏ ՋՐԵՐ

ամեն տեսակ հաճելի հոտ ունեցող, ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ յայտնի վաճառականների մօտ։ № 82 (14) 1—3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 10-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ Ֆրէյլինեան փողոց, տան Սուլթանովի, № 13։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։

(հ.) (№ 74) 4—15

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

ԲԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԴ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին։ Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գեռնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն։

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ։ Նա շատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա։ Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները։

ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար։ Այդ փոշին անփոխարինելի է լուեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում։ Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար։ Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի։ (№ 23) 15—50

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԻՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ կիլոգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թվի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ գեղարարական ապրանքների բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 26—50

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Іюля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.